

կամուրիշի կը հրամցընեն իբրև ախորժելի քաղցրաւենի մը , որովհետեւ իստին լեզի ու անհամ մասունքը զտուած ու անուշած կ'ըլլան :

ԲԺՇԿՈՒԹԻՒՆ

Շաքարեղինաց ակռային վրայ ըրած ազդեցութիւնը :

Ո՞ստերս | արեգ բնալցծը շաքարեղինաց մարդուս ակռային վրայ ըրած ազդեցութեանը քննութիւններէն հետեւալ չորս դիտողութիւնը կ'ընէ .

Ա . Ի արակ շաքարը , թէ եղեգի եղեր է և թէ բանջարի՝ միտ մնասակար է առողջ ակռաներուն , ոչ այնչափ իր ստամոքսին մէջ հանած կազովը՝ որշափ անմիջապէս մեր ծասքից գործա-

րանացը հետ շփուելուն համար :

Բ . Ոյէ որ շաքարի յագեալ լուծման մը մէջ ակռայ մը ձգուելու ըլլայ , իր բնալուծական կազմութիւնը այնպէս կ'այլայի , որ սոսնձային գոյացութեան մը կը փոխուի , փայլունութիւնը կը կորսուի , ու ծակ ծակ կ'ըլլայ , ու շատ դիւրաւ ալ կը քայլայի :

Գ . Լայս հանգամանացս պատճառը ազատ թթուի մը ներգործութիւնը չէ , որովհետեւ յայտնի է որ շաքարին մէջ չկայ , հապա շաքարին ձրկումն է որ ակռայի կրային խարսխին հետ կ'ուզէ բնալուծաբար զուգագրիլ :

Դ . Կ առային արծնուածքը ոսկրային մասէն աւելի քիչ կը վնասուի . և պատճառը այն է որ կրածնի փորաւորը բնալուծական հակազդիչներուն ներգործութեանը շատ աւելի լաւ կրնայ դիմակալել , քան կրի ծծմբուտը :

Ժ Ա Մ Ա Ն Ա Կ Ա Կ Ի Ց Ք

Արևելեան վերջին խնդիրն ու պատերազմը ¹ :

1853 — ՕԳՈՍՏՈՍ

Տ . Երկրորդ օրը (աես Մայիս 31) Աւստրիոյ դաշիճը պատասխան տուաւ . Աւստրիա Դանութեան իշխանութիւններէն Ռուս զօրաց ելլուլ խաղաղութեան հաստատութեանը քայլ մը տուած կը սեպէ : Աւստրիա որոշած է որ Դրան հաւանութեամբ այն գաւառները բռնէ . բայց ասով Ռուսիոյ դէմ թշնամութիւն ցուցընել չէ միտքը :

Ա իննայու մէջ գաղղիոյ և Մեծին Բրիտանիոյ լիտոր գեսպանները մէկ կողմանէ ու Աւստրիա արտաքին գործոց պաշտօնեայն մէկալ կողմանէ իրարու ծանուցագիր կու տան : Իրեք տերութիւնները միաբան են որ Բարձրագոյն Դրան Ռուսիոյ կայսերական արքունեաց հետ յարաբերութիւնները չեն կրնար հաստատուն ու տեսկան ըլլուլ . Ե . եթէ Ռուսիոյ մինչեւ հիմայ Մոլտուիոյ . Վալտֆիոյ ու Սերվիոյ վրայ ունեցած պաշտպանութիւնները չեն կողմանէ առաջ գաւառաց տուած արտօնութիւնները չեն կրնար հաստատուն ու տեսկան ըլլուլ . Ե . եթէ Ռուսիոյ մինչեւ հիմայ Մոլտուիոյ . Վալտֆիոյ ու Սերվիոյ վրայ ունեցած պաշտպանութիւնները չեն կողմանէ առաջ գաւառաց տուած արտօնութիւնները միաբան տերութեանց երաշխաւորութեանը տակ չինայ . Բ .

¹ Տես Համագործակցութեան 18 , 92 , 159 , 191 , 223 , 255 , 286 , 334 . Համագործակցութեան 11 , 82 , 129 , 162 :

թէ որ Դանութի նաւագնացութիւնը ու անոր բերանները ամենայն արգելքներէ ազատ չը լոն . Գ . եթէ 1841ին Յուլիոսի 13ին ստորագրուած գաղնագրաւթիւնը նորէն չքննուի միարանութեամբ ստորագրող կողմերուն . Եւստական հաւանագրակառութեան շահուն համար . Դ . եթէ Ռուսիա չգտագրի Բարձրագոյն Դրան հպատակաց վրայ ցցուցած պաշտօնական պաշտպանութենէն , և թէ որ Գաղղիա . Աւստրիա . Մհծն Բրիտանիա , Բրուսիա և Ռուսիա միաբան չը լոն ինդգելու Տաճկի աւելութենէն , առանց ամենին իր պատույն և անկախութեանը արաւ մը բերելու , իր այլ և այլ քրիստոնեայ հպատակաց կրօնական արտօնութեանը հաստատութիւնը ու պահպանութիւնը : — Աւստրիա ալ իր կողմանէ ինքնիք երկու արևմտեան աւելութեանց դիմաց միաբան կը ճանչնայ , ու մինչեւ ընդհանուր խազազութեան հաստատուիլը կը խստանայ Ռուսաստանի հետ ամենեին իրաւախութեան շմանելու . մինչեւ որ Ռուսիա այս վերսիշեալ չորս պայմանները ամբողջապէս չընդունի . այլ Աւստրիա իր կողմանէ ազատ կը ճանչնայ ինքփնք խազազութեան ուրիշ պայմաններ ալ աւելցընելու թէ որ ինքն ալ բռնագատի պատերազմին մէջ մտնելու :

Գաղղիացւոց և Անգլիացւոց նաւախումբի զօրքը Ալանա կղզիները կ'ելլան (աես 13) :

Դ . Աւստրիոյ արտաքին գործոց պաշտօնեայ